ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2025 թվական թիվ 132-Ա

ՍԻԼՎԱ ՅՈՒՐԻԿԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԱՂԱՆԻՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 37.1-րդ, 37.2-րդ, 37.3-րդ և 39-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023թ. դեկտեմբերի 14-ի թիվ 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 10-ի՝ ՀՀ Տավուշի մարզի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի մասնագիտական հանձնաժողովի նիստի թիվ 283 արձանագրությունը և Սիլվա Իսրայելյանի դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Սիլվա Յուրիկի Իսրայելյանին 2025 թվականի հունիսի 20-ից նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Բաղանիսի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 /հինգ/ տարի ժամկետով մեկ տարի փորձաշրջանով:

2. Սիլվա Յուրիկի Իսրայելյանին փորձաշրջանի համակարգող նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Լճկածորի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Մխիթար Առաքելյանին:

3. Սիլվա Յուրիկի Իսրայելյանին վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

4. «ՀՀ Տավուշի մարզի Բաղանիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Սիլվա Իսրայելյանի փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում «ՀՀ Տավուշի մարզի Բաղանիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի գնահատմանը ներկայացնել ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրի 1 տարվա կատարողական հաշվետվությունը:

5. Փորձաշրջանի ղեկավար Մխիթար Առաքելյանին՝ փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, գնահատել փորձաշրջանի ընթացքում տնօրենի կատարած աշխատանքները և մասնագիտական հանձնաժողովին ներկայացնել տնօրենի աշխատանքների գնահատման թերթիկը:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

2025-06-20 13:19:25 GMT+4
Հաստատված է ԷԿՕՏ-ի կողմից

2025թ. հունիսի 20
ք.Իջևան